Summaries
Ամփոփումներ

ԿՆԻՔՆԵՐԸ ԵՎ ԿՆԻՔԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ. ՆՈՐ ԳՏԱԾՈՆԵՐ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎՄՏՅԱՆ ԻՐԱՆԻՑ

ԱՔԲԱՐ ԱԲԵԴԻ

Վարչական համակարգի խորհրդանիշ հանդիսացող կնիքները և կնքադրոշմները տարածված չեն կուր-արաքսյան մշակույթում և համարվում են հազվագյուտ գտածոներ: Ահա թե ինչու հյուսիսարևմտյան Իրանի, Հարավային Կովկասի և արևելյան Թուրքիայի կուր-արաքսյան հուշարձաններից ի հայտ եկած կնիքների ընդհանուր թիվը չի գերազանցում մեկ տասնյակը: Քուլ Թեփե Գարգառի պեղումների առաջին և երկրորդ պեղաշրջանների ընթացքում ի հայտ եկան դրոշմակնիքներ և գլանաձև կնիքներ, որոնք համարվում են կնիքագործության առաջին վկայությունը հյուսիսարևմյան Իրանի կուր-արաքսյան մշակույթի հուշարձաններում: Դրանցից գլանաձևն ունի եզակի ձևավորում՝ ներկայացնում է խոյի եղջյուրի, բուի կամ մարդու աչքի տեսքով կրկնապարույր՝ խորհրդանիշ, որը հայտնի է նաև այդ մշակույթի այլ առարկաների վրա (խեցեղեն, մետաղ): Ռադիոածխածնային անալիզների միջոցով կնիքի համատեքստը թվագրվում է Ք.ա. 2900-2850 թթ-ով: Քննարկվող կնիքները Իրանի այս տարածաշրջանում վարչա-տնտեսական ու սոցիալական զարգացումների առաջին վկայությունն են և կարող են դիտարկվել կուր-արաքսյան մշակույթում աճող բարդվածության համատեքստում:

ՇԵՆԳԱՎԻԹԻ ԿԱՆԱՑԻ ԱՐՁԱՆԻԿԸ ԵՎ ԴՐԱ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ

ԱՆՆԱ ԱԶԻՋՅԱՆ

Տարածված կարծիք է, որ վաղ երկրագործական մշակույթներին բնորոշ հատկանիշներից են մարդակերպ, հատկապես՝ կանացիակերպ պատկերները և արձանիկները: Որոշ արձանիկներ ձևավորված են ընդհանրացված-ռեալիստական, իսկ որոշները՝ սխեմատիկ-սիմվոլիկ ոճերով, պատկերվել են մերկ տեսքով և հայտնաբերվել են կացարաններում, օջախների մեջ և դրանց շուրջը, երբեմն՝ ծիսապաշտամունքային կառույցներում: Պատահական չէ, որ կանացիակերպ արձանիկները հաճախ ի հայտ են գալիս օջախներում և դրանց կից, քանի որ տվյալ ժամանակաշրջանում օջախները դիտվել են որպես արական խորհրդանիշ: Կանացի արձանիկները հավանաբար կիրառվել են ծիսապաշտամունքային արարողությունների ժամանակ, որոնք, ըստ երևույթին, անց են կացվել օջախների շուրջ: Այդ ծեսերի ընթացքում արձանիկները, մասնավորապես դրանց վերջույթները՝

ձեռքերը և ոտքերը, երբեմն մարմինն ու գլուխը մասնատվել են: Կենդանակերպ գլուխներ ունեցող կանացի արձանիկները, հավանաբար, խորհրդանշել են և միաժամանակ վերագրվել են տվյալ կենդանու սիմվոլիկ հատկանիշներին: Կանացիակերպ արձանիկները խորհրդանշել են պտղաբերություն ու կապվել մայր աստվածության հետ: Ներկա հոդվածը քննարկում է կուր-արաքսյան մշակույթում տարածված կանացի արձանիկների խնդիրը՝ կենտրոնանալով այդ մշակույթի անվանադիր հուշարձան Շենգավիթի վրա:

ՇԻՐԱԿԻ ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ

ԼԵՎՈՆ ԱՂԻԿՅԱՆ

Հոդվածը նպատակ ունի մեկտեղել Շիրակի տարածքում կուր-արաքսյան մշակույթին վերագրվող դամբարանների մասին առկա տեղեկությունները:

Դեռևս 19-րդ դ-ի վերջից սկսած և մինչև այժմ շարունակվող դամբարանների ուսումնասիրությունների արդյունքերը հիմնականում հրատարակվել են հայերեն կամ ռուսերեն լեզուներով, երբեն՝ որոշակի թերություններով և բացթողումներով. հաճախ բացակայում են դամբարանների մասին տեղեկությունները, չափումները, գտնված իրերի գրչանկարները և լուսանկարները, իսկ որոշ դեպքերում պեղումները չեն հանրայնացվել: Ընդհանուր առմամբ՝ մեզ հաջողվեց փաստագրել դամբարանների առկայությամբ տասներեք հնավայր (Ազատան, Անուշավան, «Թռչնաբուծարան», Լանջիկ, Կապս, Կառնուտ, «Կարմիր ամրոց», Հառիճ, Հոռոմ, «Մսի կոմբինատ», Ջրափի, «Սև ամրոց», Քեթի)՝ քսանյոթ դամբարաններով, որոնցից երկուսը պատահական գտածոներով ենթադրյալ դամբարաններ են («Կարմիր ամրոց», «Թռչնաբուծարան») և երեքը՝ նորահայտև, դեռևս չհրատարակված (Կառնուտ, դամբարան թիվ 11, Ջրափի, դամբարան թիվ 1 և Ազատան, դամբարան թիվ 13):

Ընդհանրացնելով Շիրակի տարածքում կուրարաքսյան մշակույթի դամբարանների մասին առկա տեղեկությունները՝ դրանք կարելի է խմբավորել ըստ մի քանի չափանիշների՝ թվագրություն, կառույց, թաղման ծես: Ժամանակագրական տեսանկյունից Շիրակում հայտնի քսանյոթ դամբարաններից քսանը պատկանում են կուր-արաքսյան մշակույթի առաջին փուլին (Ք.ա. 3600/3500-2900 թթ.), յոթը՝ երկրորդ (Ք.ա. 2900-2600/2500 թթ.): Հարկ է նշել, որ երկրորդ փուլով թվագրվող յոթ դամբարաններից հինգը պեղվել են Կառնուտում: Առաջին փուլին վերաբերվող դամբարաններից տասնիններ թվագրությունը կատարվել է հայտնաբերված խեցեղենի և ռադիոածխածնային հետազոտությունների տվյալների հիման վրա, իսկ Կառնուտի թիվ 11 դամբարարանը, հիմնվելով պայտաձև կառույցի զուգահեռների վրա, վերագրել ենք կուր-արաքսյան մշակույթի վաղ փուլին: Քննարկվող դամբարաններից միայն Ազատանի թիվ 13 դամբարանն ունի արտաքին կամ այժմ ևս նկատվող վերգետնյա կառույց: Բացի Հառիճի դոլմենից (սալարկղ) և «Սև ամրոցի» (հիմնահողային) դամբարաններից, պեղված մյուս բոլոր դամբարանների խցերը քարարկղներ են: Կարևոր է ուշադրություն դարձնել, որ «Սև ամրոցի» դամբարանը

վաղբրոնզեդարյան սենյակի մեջ կատարված մանկական թաղում է և կրկնում է երբեմն նաև կուր-արաքսյան մշակույթում հանդիպող նէոլիթ-էնեոլիթյան թաղման ծեսը: Պահպանված կառույցով քսաներեք դամբարանների մեծ մասն ունեն մուտք: Խցերում հայտնաբերված թաղումների գերակշիռ մասը պարունակում են մեկից ավել անհատների կմախքներ:

Ազատանի, Կառնուտի և Ջրափիի նորահայտ դամբարանները ենթարկվել են մանրամասն քննարկման և դիտարկվել են տարածաշրջանի կուր-արաքսյան դամբարանների համատեքստում:

HOMO MOBILIS
ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Պատկերացումները աշխարհագրական միջավայրի և դրա բաղադրատարրերի մասին էական դեր են խաղացել վաղ հասարակություններում ինքնության ձևավորման գործում: Ք.ա. 4-րդ հազարամյակի առաջին կեսին Առաջավոր Ասիայի հնագույն հասարակությունների կյանքում նկատված արմատական տեղաշարժերի հիմնապատճառներից մեկը համարվում է այսպես կոչված «երկրորդական արտադրանքի հեղափոխությունը»: Նշված փոփոխություններն առաջին հերթին դրսևորվեցին մասնագիտացված շարժուն անասնապահ հանրությունների կամ խմբերի հանդես գալով: Այս խմբերը նստակյաց երկրագործ-անասնապահների հետ զբաղեցրել են նույն կենսատարածքը (բավականին բարդ ու հակասական փոխհարաբերություններով հանդերձ) և մասնակցել այդ կենստարածքին բնորոշ մշակութային միջավայրի կայացմանը: Միջագետքի, Զագրոսի արևելյան փեշերի, Սիրիայի, Լևանտի քաղաք-պետությունների, տարածքային խոշոր պետությունների և վաղ կայսրությունների ողջ քաղաքական պատմությունը լի է անապատի ու լեռնային քոչվոր հանրությունների հետ տարաբնույթ փոխհարաբերությունների մասին վկայություններով ու պատումներով:

Կուր-արաքսյան մշակույթի աննախադեպ տարածումը Առաջավոր Ասիայի ընդարձակ տարածքներում քննարկվել և ներկայումս էլ քննարկվում է շարժուն խմբերի միգրացիայի, տարածական «էքսպանսիայի», լեռնային և հարթավայրային հասարակությունների փոխհարաբերությունների համատեքստում:

Վերջին տարիներին Հայաստանի տարածքում պեղված մի շարք հուշարձանների տվյալները թույլ են տալիս վերը նշված գործընթացները մեկնաբանել նոր տվյալներով ու մոտեցումներով: Մասնավորապես՝ Որոտանի կիրճում պեղված, էնեոլիթի ավարտական փուլը նշանավորող Գոդեձորի բնակատեղիի տվյալները ցույց են տալիս, որ այն եղել է ժամանակավոր բնակատեղի և պարբերաբար բնակեցվել է ուշ գարնանից մինչև ուշ աշուն: Ոսկրաբանական նյութերը, մանածագործության և կաթնամթերքի մշակման մասին վկայող գտածոններն ու տվյալները ցույց են տալիս,

որ գործ ունենք «երկրորդական արտադրանքի հեղափոխության» արդյունքում ձևավորված մասնագիտացված շարժուն անասնապահ հանրության բնակատեղիի հետ: Գոդեձորից հայտնաբերված ներմուծված գունազարդ խեցեղենի մեծ քանակը ցույց է տալիս, որ վերջիններիս սեզոնային տեղաշարժի ձմեռային հանգրվանը եղել է Ուրմիայի հարավային ափերին: Մշակութային տարբեր գոտիներին բնորոշ նյութերի մեկտեղումը մեկ հուշարձանի տարածքում թույլ է տալիս խոսելու «տրանսլոկալ» հանրության մասին: Տրանսմոբիլ խմբերի առկայությունը կուր-արաքսյան մշակույթի տարածմանը նախորդող փուլում (Ք.ա. 3600-3400 թթ.), ինչպես նաև կուր-արաքսյան համալիրի տարածման նույն աշխարհագրությունը դեպի Ուրմիայի ավազան և Զագրոսի փեշեր (Ք.ա. 3300/3200-3000/2900 թթ.) թույլ են տալիս խոսելու մերձարաքսյան շրջաններից միգրացիոն հոսքերի առանձնահատուկ մեխանիզմների մասին:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում Հայաստանի տարբեր շրջաններում պեղվել են դամբանային համալիրներ (Ավանի, Թալինի, Ծաղկալանջի դամբարանադաշտեր), որոնք կառուցվածքային հատկանիշներով կտրուկ տարբերվում են մինչ այդ հայտնի կուր-արաքսյան թաղման կառույցներից: Վերգետնյա կամ կիսով չափ գետնափոր՝ շրջանաձև կամ ուղղանկյուն հատակածով թաղման խցերը եզրագծված են կրոմլեխով և ծածկված են 0.8-ից 2 մ բարձրության քարահողի լիցքով: Լիցքի տակ, թաղման խցից դուրս՝ կրոմլեխով եզրագծված տարածքը պատվել է քարազրահով: Այս դամբարանների հիմնական առանձնահատկություններց մեկն էլ այն է, որ դրանց մի մասն ունի դեպի դամբանախուց տանող քարաշար «մուտք»: Դամբարաններում արձանագրվել են խմբային թաղումներ (3-10 մարդ): Բացված իրավիճակները կասկած չեն թողնում, որ դրանցում թաղումները կատարվել են պարբերաբար և յուրաքանչյուր նոր թաղման դեպքում նախորդի մնացորդները հավաքել և «տեղավորել են» խցի որևէ հատվածում: Կարևոր է նշել նաև, որ թաղումները երկու շերտով են բացվում և ստորին ու վերին շերտերի թաղումներն անջատված են հողալիցքով կամ փոքրիկ սալաքարերով՝ հանգամանք, որն ըստ ամենայնի ցույց է տալիս, որ վերին և ստորին թաղումների միջև ժամանակագրական որոշակի խզում կա: Թաղումներն ուղեկցվել են մանր եղջերավորների զոհաբերություններով: Կուր-արաքսյան մշակույթին վերաբերող ինքնատիպ խումբ կազմող այս դամբարաններն առանց բացառության ներկայացված են կուր-արաքսյան վաղ փուլին բնորոշ խեցեղենի օրինակներով: Նշված դամբարանախմբերը որևէ բնակատեղիի հետ չեն ասոցացվում: Թալինի և Ավանի դամբարանադաշտերի հարևանությամբ որևէ բնակատեղի չկա և կուր-արաքսյան նյութերով ամենամոտ բնակատեղիները գտնվում են մի քանի կմ հեռավորության վրա: Ծաղկալանջի պարագայում առկա է փոքր բլրակ, որի ստորոտին կան ուղղանկյուն հատակագծով կառույցներ (ամենայն հավանականությամբ՝ առանց ծածկի փարախներ են), որոնց հարևանությամբ կատարված ծավալուն հողային աշխատանքների ընթացքում մշակութային շերտ չի արձանագրվել: Թույլ արտահայտված մշակութային շերտ կա բլրի գագաթին: Բլրի ստորոտին և գագաթին հանդիպում են ինչպես ուշ բրոնզին, այնպես էլ՝ վաղ բրոնզի վաղ փուլին բնորոշ խեցու բեկորներ: Բոլոր դեպքերում ակնհայտ է, որ այստեղ ունենք կենդանիների պահելու համար ժամանակավոր կառույցներ

և վաղ բրոնզի դարում տարածքն օգտագործելու փաստեր, բայց ոչ մշտական բնակատեղի:

Այս տիպի հուշարձանների առկայությունը վկայությունն է այն բանի, որ կուր-արաքսյան սոցիալական միջավայրը բավականին բարդ կազմ ու կառուցվածք ուներ և ներկայացված է ինչպես մշտական բնակատեղիներով երկրագործների, երկրագործ-անասնապահների, այգեգործների, հանքագործների հանրություններով, այնպես էլ շարժուն՝ մշտական բնակության վայր չունեցող անասնապահ հանրություններով:

Կուր-արաքսյան մշակույթի հիմնական հատկանիշները կրող շարժուն խմբերի առկայության մասին վկայող կարևոր օբյեկտներից են Թալինի դամբարանադաշտում պեղված «ծիսական հարթակը» և որպես թաղման կառույց բնութագրված թիվ 12 դամբարանը: Այս երկուսն էլ ծառայել են ծիսական արարողությունների համար և տարածքը «լքելուց» առաջ միտումնավոր կոնսերվացվել-թաղվել են դամբարան հիշեցնող լիցքի տակ:

Թալինի դամբարաններում արձանագրվել են մեծ քանակով մանր եղջերավորների մնացորդներ՝ մինչև 10 և ավելի առանձնյակ: Սրա հետ մեկտեղ պեղվել կամ հետախուզական ուսումնասիրություններով արձանագրվել են ընդարձակ տարածքներ զբաղեցնող, կուր-արաքսյան վաղ փուլին բնորոշ նյութերով միաշերտ բնակատեղիներ, որոնց տարածքի մեծ մասը զբաղեցնում են փարախները: Նման պատկեր ունենք Ծաղկալանջի, Մաստարայի, Ծաղկասարի բնակատեղիներում:

Այս դիտարկումները հիմք են տալիս նշելու, որ գործ ունենք նույն տարածքները համատեղ բնակեցնող (նաև միևնույն մշակութային միջավայրի հիմնական հատկանիշները կրող), բայց մասնագիտացված տնտեսական գործունեությամբ իրարից տարբերվող երկրագործ-անասնապահ և շարժուն անասնապահ հանրությունների հետ: Գտնում ենք նաև, որ Առաջավոր Ասիայում շարժուն անասնապահության, նույն կենսատարածքում բնակվող շարժուն անասնապահների և նստակյաց եկրագործական հանրությունների փոխհարաբերության բնութագրության համար կիրառված «Enclosed Nomadism», «Dimorphic Structure» հասկացությունները լիովին կիրառելի են նաև Հայաստանի Ք.ա. 4-րդ հազարամյակի երկրորդ կեսի սոցիալ-մշակութային լանդշաֆտի նկարագրության պարագայում:

«ՄԱՏՐՅՈՇԿԱ ՏԻԿՆԻԿ» ՏԱՐԱԾԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ. ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՍԹԻՎԵՆ ԲԱԹԻՈՒԿ

Կուր-արաքսյան մշակույթը գոյություն է ունեցել մոտ մեկ հազարամյակ: Սակայն, պետք է խոստովանել, որ այդ մշակույթի բնակավայրերի գոյության հստակ ժամանակահատվածները ամբողջովին պարզ չեն: Հնավայրերից շատերը ներկայացվում են իբրև միմյանց ժամանակակից, բայց դրանց միջև որոշակի ժամանակային տարբերություններ պետք է եղած լինեն: Առանց այս

հուշարձանախմբերի մաս կազմող առանձին հնավայրերի ժամանակագրությունն իմանալու՝ հնարավոր չէ պատկերացում կազմել բնակավայրերի խմբերի, կենտրոնական և արբանյակ հուշարձանների հարաբերակցության, բնակչության թվաքանակի և ընդհանրապես՝ բնակավայրային համակարգի մասին:

Կուր-արաքսյան մշակույթի տարածումը տեղի է ունեցել իր գոյության երկրորդ փուլում: Նոր հետազոտությունները ցույց են տալիս, որ բնակչության մեծ պայթյուն կամ մարդկանց մեծ խմբերի տեղաշարժ ենթադրող տեսություններն արդեն ժամանակավրեպ են: Ներկայումս ավելի ճիշտ է կուր-արաքսցիների տարածումը ներկայացնել որպես մշակութային առումով պահպանողական մարդկային խմբերի աճող բնակչության փոքրամասշտաբ շարժ: Ընդ որում, այդ խմբերն իրենց ավանդական գյուղատնտեսական փորձով սերտաճել են համապատասխան տարածքների տեղական ավանդույթներին: Ընտանիքների ընդլայնման արդյունքում կուր-արաքսյան համայնքները տրոհվում են տոհմերի՝ ընդգրկելով նոր բնակավայրեր, որոնք տարածվում էին նախկին բնակավայրի մոտակայքում, իսկ երբեմն էլ՝ ավելի հեռու: Նույնիսկ այն դեպքերում, երբ այդ բնակավայրերն ընդլայնվում էին դեպի նոր տարածքներ, դրանք կենտրոնանում էին նմանատիպ լանդշաֆտներում, ինչը թույլ էր տալիս պահպանել ավանդական կենսապահովման ռազմավարությունը:

ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԿՈՒՐ-ԱՐԱՔԱՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԽՆԴԻՐԸ

ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ

Պատկերացումները աշխարհագրական միջավայրի և դրա բաղադրատարրերի մասին էական դեր են խաղացել վաղ հասարակություններում ինքնության ձևավորման գործընթացում: Կախված բնապատմական միջավայրից՝ յուրաքանչյուր հասարակություն ստեղծել է արժեքային յուրահատուկ համակարգ և փորձել այն զարգացնել ու մոդելավորել ժամանակի ու տարածության մեջ: Այս իմաստով պատահական չէ, որ հնագույն հասարակությունները արժեվորելու գործում այսօր կարևորվում է կենսատարածքի տարրերի փոխներգործության հարցը, ինչն աստիճանաբար դառնում է անցյալն ուսումնասիրող գիտությունների գերխնդիրը: Այս աշխատանքում փորձ է կատարվում Հայկական լեռնաշխարհը և, մասնավորապես, ներկայիս Հայաստանը դիտարկել հիշյալ տեսանկյունից՝ հիմնական շեշտը դնելով տարածքի ուղղահայաց գոտիականության սկզբունքի մշակութային հատկանիշների վրա:

Վերջին շրջանի մեր դաշտային հետախուզական աշխատանքները հատկապես բարձր լեռնային գոտիներում ի հայտ են բերում տարածության ընտելացման ժամանակագրական մի պատկեր, որն այս հոդվածում ներկայացվում է որպես աշխատանքային վարկած: Ըստ այդ տվյալների՝ բարձր լեռնային գոտիները Հայաստանում ակտիվորեն օգտագործվել են նեոլիթ/խալկոլիթի, միջին և ուշ բրոնզի,

վաղ երկաթի դարերի ընթացքում և միջնադարում, գրեթե չեն օգտագործվել վաղ բրոնզի դարում, ուրարտական և անտիկ շրջանում: Համապատասխանաբար, տվյալ մշակույթները ցույց են տալիս լանդշաֆտի յուրացման ուղղահայաց և հորիզոնական զարգացման միտումներ:

Անկախ այն հանգամանքից, թե ուղղահայաց գոտիականության մակարդակները ինչ հաճախականությամբ են օգտագործվել տարբեր ժամանակներում, տարածության կազմակերպման այս տարբերակը՝ ստորին (սարահարթային), միջին (նախալեռնային) և վերին (լեռնային) մակարդակներում՝ լեռ + լիճ + սարահարթ լանդշաֆտային առանցքով և նույնատիպ միջավայրի՝ բոլոր երեք մակարդակներում մոդելավորման սկզբունքով, օրինաչափ է ողջ Հայկական լեռնաշխարհի համար: Լեռնաշխարհը որպես միասնական պատմամշակութային միավոր կարելի է սահմանել նախևառաջ կենսատարածքի կազմակերպման այս մոդելի հիման վրա, որը, սակայն, զուգահեռներ է գտնում հարակից կովկասյան-փոքրասիական միջավայրերում: Սա խոսում է այն մասին, որ լեռնաշխարհը ոչ միայն աշխարհագրական ուրույն մի տարածք է, այլև՝ յուրահատուկ/ներփակ հաղորդակցական համակարգ:

Այս իմաստով լեռնաշխարհի երեք լճերը՝ Վանը, Ուրմիան և Սևանը, որոնք գտնվում են միջին-նախալեռնային մակարդակի վրա, կիսելով նույնական լանդշաֆտային առանձնահատկություններ, խիստ էական նշանակություն են ունեցել հնագույն Հայաստանի պատմամշակութային զարգացումներում: Ընդ որում, այդ լճերը շրջապատող լեռները եղել են բնական այն սահմանները, որոնք մի կողմից պաշտպանական դեր են խաղացել, մյուս կողմից էլ հանդիսացել են այդ տարածքների կրողների հոգևոր կենտրոնները: Լեռների ու լճերի միջև ընկած սարահարթերում ընթացել է լեռնաշխարհի բնակչության կենսագործունեությունը:

ՆՅՈՒԹԵՐ ՖԻՈԼԵՏՈՎՈ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ

ԱՐԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ԱՆՆԱ ԱԶԻԶՅԱՆ

Բրոնզեդարյան «Ֆիոլետովո» բնակավայրը գտնվում է Լոռի մարզի Վանաձոր շրջանի համանուն գյուղի ծայրամասում: Բնակավայրի կոորդինատներն են՝ N 40 71 68 71. E 44 73 55 34: Հուշարձանի անմիջապես ստորոտի մոտից՝ հյուսիսային կողմից, հոսում է Աղստև գետը: Տեղի բնակիչներն այն անվանում են «Ամրոց»: Բնակավայրը տեղակայված է մեծ քանակությամբ մետաղական օգտակար հանածոներ ունեցող տարածաշրջանում: Այս օգտակար հանածոները դեռևս հնագույն ժամանակներից օգտագործվել են տեղի վաղ հասարակությունների կողմից մետաղամշակման գործում: Հուշարձանի տարածքում առաջին անգամ պեղումներ է իրականացրել Հ. Մնացականյանը 1955 թ-ին, այնուհետև, 1999 թ-ին՝ Ա. Գևորգյանը: Պեղումների արդյունքում հայտնաբերվել են ինչպես ամբողջական, այնպես էլ՝ բեկորային վիճակում խեցեղեն առարկաներ, ինչպես նաև տարատեսակ քարե գործիքներ:

Բրոնզի դարի հետազոտության կարևոր հիմնախնդիրներից է մետաղական օգտակար հանածոներ ունեցող շրջաններում տեղակայված հնագիտական հուշարձանների ուսումնասիրությունը: Նման տարածքներում գտնվող հուշարձանների պեղումները կարևոր նշանակություն ունեն մետաղամշակման պատմության ուսումնասիրման գործում:

ԿՈՒՐ-ԱՐԱՔԱՅԱՆ «ԾԱՎԱԼՈՒՄ»-Ը. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԵՐԵՎՈՒՅԹ

ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ

Հոլոցենի շրջանում փաստագրված գլոբալ կլիմայական փոփոխություններից երկուսը, որոնք մասնագիտական գրականության մեջ հայտնի են որպես «4.2 հազար տարի մեզանից առաջ» և «5.2 հազար տարի մեզանից առաջ իրադարձություն» անուններով, համընկնում են Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզի դարն ընդգրկող կուր-արաքսյան մշակույթի երկու կարևոր փուլերի հետ: Առաջինը վերաբերում է այս մշակույթի ավարտական փուլում՝ Ք.ա. մոտ 2500 թ-ից դիտարկվող տրոհման և մասնատման գործընթացին: Այն ավարտվում է Ք.ա. մոտ 2200 թ. սահմաններում կուր-արաքսյան բնակավայրերի լքմամբ կամ ավերմամբ, բնակչության զանգվածային արտագաղթով և ընդարձակ տարածքների ապաբնակեցմամբ (ներառյալ՝ Արարատյան դաշտավայրը): Զուգահեռաբար, այդ գործընթացն ուղեկցվում էր էթնիկական տեղաշարժերով («կուրգանային մշակույթ»-ի կրողների ներհոսքը դեպի լեռնաշխարհ): Երկրորդը այսպես կոչված «կուր-արաքսյան ծավալում»-ն է դրանից դարեր առաջ: «Ծավալման» ժամանակագրումը Ք.ա. մոտ 3000-2900 թթ-ով ցույց է տալիս, որ այն տեղի է ունեցել կլիմայական կտրուկ փոփոխությունների մեկ այլ շրջանում և, ամենայն հավանականությամբ, դրա անմիջական հետևանքն էր: Կուր-արաքսյան մշակութային աշխարհում դիտարկվող հասարակական ճգնաժամի դրսևորումները, բնակավայրերի լքումն ու ավերումը, բնակչության շարժունակության աճն ու տեղաշարժը («ծավալում»-ը) դեպի առավել բարենպաստ գոտիներ կարող են վկայել, որ մենք գործ ունենք փոխկապակցված երևույթների հետ:

ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՔՍԱՆԱՄՅԱ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԹԵԼ ԲԵԹ ՅԵՐԱԽՈՒՄ. ԻՆՉ ՍՈՎՈՐԵՑԻՆՔ ՆՈՐ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ

ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻՆԲԵՐԳ, ՄԱՐԿ ԻԶԵՐԼԻՍ, ՍԱՐԻՏ ՊԱԶ

Հնագիտության մեջ հաճախ է պատահում, երբ «էկզոտիկ» մշակութային դրսևորումներն ավելի մեծ ուշադրության են արժանանում, քան սովորականները:

Բեթ Յերախում մենք եզակի հնարավորություն ունեցանք ուսումնասիրելու նման մի երևույթ՝ ի դեմս կուր-արաքսյան համայնքների, որոնք, տարանջատվելով տեղական միջավայրից, ցուցաբերում են առօրյա կյանքի այնպիսի առանձնահատկություններ, որոնք էական զուգահեռներ են գտնում հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող նախահայրենիքում:

Տարբեր հեղինակներ արդեն նկատել են, որ կուր-արաքսյան համայնքները խուսափել են ուրուկյան կենտրոններից Միջագետքում և եգիպտական կենտրոններից Լևանտում: Մեր փորձը Բեթ Յերախում ցույց է տալիս, որ նույնիսկ այնպիսի միջավայրում, որտեղ կուր-արաքսյան համայնքները կապվածության միտումներ են ցուցաբերում լևանտական հասարակության հետ, այնուամենայնիվ, դրանք չեն կորցնում իրենց կենտրոնախույս բնույթը և պահպանում են մշակութային հեռավորություն տեղական հասարակությունից: Ավելին, այս կենտրոնախույս միտումները կարող են բացատրել կուր-արաքսյան համայնքի աննախադեպ ընդլայնման հանգամանքը: Կարծում ենք, որ հենց այս միտումն է ընկած հետազոտվող մշակույթի աննախադեպ տարածման հիմքում: Այս տեսանկյունից կուր-արաքսյան մշակույթը կարելի է բնութագրել որպես «անարխիական կայսրություն», ինչն էապես կարևորում է այս երևույթի հետազոտության անհրաժեշտությունը:

ՆՈՐԱԲԱՑ ԲՆԱԿԱՏԵՂԻՆ

ՍԵԴԱ ԴԵՎԵՋՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ԴԱՎԹՅԱՆ

Նորաբացը կուր-արաքսյան մշակույթի վաղագույն հուշարձաններից է: Պեղումներն այստեղ իրականացվել են 1979 թ-ին Գ. Արեշյանի, Ս. Դևեջյանի և Հ. Իսրայելյանի կողմից: Արարատյան դաշտում գտնվող այս վաղբրոնզեդարյան բնակավայրը ներկայացնում է շրջանաձև, հում աղյուսից կառուցված շինություններ, որոնց հարավային մասում բացվել են շրջանաձև հիմքով և շուրջ 1-1.5 մ տրամագծով կառույցներ, որոնք ունեն ընդհանրություններ թե՛ իրենց կառուցվածքում, թե՛ այստեղ գտնված նյութերի առումով:

Նորաբացի պեղումները լույս սփռեցին վաղ բրոնզի դարում դեռևս անհայտ շինությունների մի տեսակի վրա, որը, հավանաբար, կապվում է տնտեսական գործունեության հետ:

Հուշարձանի մյուս առանձնահատկությունը շյուղե քթոցների փաստագրումն է, որոնք պարունակում էին դեռևս պահպանված ոչխարի կամ այծի կտիտներ: Դրանք, հավանաբար, օգտագործվել են որպես պարարտանյութ երկրագործական աշխատանքներում կամ որպես վառելիք:

Նորաբացի հուշարձանի ուսումնասիրությունը դեռևս գտնվում է նախնական փուլում: Առաջիկայում հետազոտության կենթարկվեն բնակավայրի հիմնական հատվածը, ինչպես նաև միջինբրոնզեդարյան դամբարանները:

ՎԱՂ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆ ՍԱՍՈՒՆԻԿԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻՑ

ՆՈՐԱ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

Արագածոտնի մարզում գտնվող Սասունիկի դամբարանադաշտում հայտնաբերված դամբարաններից մեկը վաղ բրոնզեդարյան է: Դամբարանը գետնափոր խցով սալարկղ է, որի վերգետնյա կառույցները չէին պահպանվել: Ծածկի սալերից պահպանվել էր մեկը՝ թեքությամբ ընկած խցի մեջ: Հյուսիս-հարավ առանցքով ուղղված ուղղանկյունաձև խցի երկայնական պատերը շարված էին երկուական, գլխապատը մեկ՝ ոչ շատ հաստ սալերով: Հարավային պատը, որը մուտքի դեր էր կատարել, շարված էր սալով՝ միջին մեծության քարով, դրսից՝ լրացուցիչ ամրացված էր: Ոսկրաբանական նյութը բացակայում էր: Թաղմանն ուղեկցող գույքը կազմված էր սև միականթ և գորշ-դարչնագույն գավաթներից, դարչնագույն կիսագնդաձև քրեղանից և անոթի վզի բեկորից: Հայտնաբերված նյութերի զուգահեռները հայտնի են վաղ բրոնզի առաջին փուլի՝ Ք.ա. 4-րդ հազարամյակի երկրորդ կեսից 3-րդ հազարամյակի սկիզբ ընկած ժամանակահատվածով թվագրվող հուշարձաններից: Դամբարանը ևս, համապատասխանաբար, թվագրվում է այդ ժամանակաշրջանով:

ԿԱՎԱԿԵՐՏ ԱՐՁԱՆԻԿՆԵՐ ԱԳԱՐԱԿԻՑ

ՆՈՐԱ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

Ագարակ հնավայրը գտնվում է Արագածոտնի մարզի համանուն գյուղի հարավ-արևմտյան կողմում: Հուշարձանախմբից, որը Երևան-Գյումրի ավտոմայրուղով երկու մասի է բաժանված, պեղվել է հյուսիսային ժայռահարթակը: Պեղումների արդյունքում փաստագրվել է, որ հուշարձանը բնակեցված է եղել վաղ բրոնզից մինչև ուշ միջնադար: Ժայռահարթակը հարավային և հարավ-արևմտյան կողմից եզերվում է խոշոր քարերով շարված հենապատով: Հենապատի մոտ հնագիտական շերտերի վերին հատվածները առաջացել են ժայռահարթակի վրայի մշակութային շերտը հետագայում այդտեղ լցվելու եղանակով: L_{10} քառակուսու այդ խառը շերտում այլ գտածոների թվում հայտնաբերվել են նաև վաղ բրոնզի ժամանակաշրջանի կանացիակերպ և կենդանակերպ կավե չորս արձանիկ:

Հայտնաբերված կանացիակերպ արձանիկներից երկուսը պատկերում են տարածած թևերով, գոտկատեղը կոնքից ներճկումով անջատված մերկ կանանց: Արձանիկների վրա ելուստների տեսքով արտահայտված են կրծքերը, փոսիկներով՝ իգական հատկանիշը և մեկի պորտը: Առաջին արձանիկի վզին թմբիկաձև ժապավեն է փաթաթված և դիմահայաց կողմի ձախ մասում առկա մազերի հյուսը (աջակողմյանից պահպանվել է հետքը): Երրորդ՝ թերի արձանիկի առանձնահատկությունը իրանին արված փորագիր գծանախշն է: Եզան արձանիկը

թերի է, միասին կերտված, իրարից թեթևակի առանձնացվող ոտքերով և լուծը տեղադրելու համար արված անցքերի ակոսների պահպանված հետքով:

Վաղ բրոնզի շրջափուլից հայտնի կանացիակերպ և կենդանակերպ արձանիկները օգտագործվել են ծիսակատարությունների ժամանակ: Կանացի արձանիկները խորհրդանշել են կյանքի արգասավորություն, պտղաբերություն, վերարտադրություն և հարատևություն: Ծեսերում կենդանիների արձանիկների օգտագործման հմայական նշանակությունն անասնագլխաքանակի ավելացումն էր: Ներկայացվող արձանիկները, լրացնելով վաղ բրոնզեդարյան մանր պլաստիկայի նմուշների խումբը, ի հայտ են բերում կատարման նոր ձևեր (վզի թմբիկը, հյուսը, ևն): Արձանիկները թվագրվում են Ք.ա. 29-26-րդ դդ-ով:

ԿԱՐԱԶԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ. ԷՐԶՐՈՒՄԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿՈՒՄ ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԵՀՄԵԹ ԸՇԸՔԼԸ

Կուր-արաքսյան մշակութային երևույթը, որը բնութագրում է Մերձավոր Արևելքի հնագիտության մեջ՝ Տավրոսների և Կովկասի միջև ընկած լեռնային բարդ գոտում տեղ գտած գործընթացները, ուշադրություն է գրավում հիմնականում իր աշխարհագրական և ժամանակագրական ընդարձակ սահմաններով: Այսօրվա քաղաքական սահմանները հատող այս մշակույթը վկայված է ավելի քան տասը երկրների տարածքում: Նրա բնական սահմանները հասնում են Կովկասյան լեռներից անդին և մինչև Տավրոսյան լեռները, Կասպից ծովի ափերից մինչև Միջերկրական ծովի ափեր: Այս ընդարձակ տարածքն ընդգրկում է աշխարհագրական, միջավայրային և մշակութային առումներով տարբեր գոտիներ: Նման բազմազանությունը բնականաբար արտացոլված է մշակութային այս մեծ երևույթի տարաբնույթ դրսևորումներում:

Մոտ 6500 տարի առաջ հին Մերձավոր Արևելքի լեռնային հատվածը կամ այսպես կոչված եզրային գոտին հյուրընկալել էր մշակութային մի մեծ երևույթի: Դա նստակյաց-երկրագործական կամ շարժուն-անասնապահական համայնքների մշակույթն էր: Այդ համայնքներն ունեին իրենց յուրահատուկ ճարտարապետական և խեցեգործական ավանդույթները: Ուշադրություն են գրավում բազմաթիվ ոլորտներում այս մշակույթը կրող մարդկանց յուրօրինակ նախասիրությունները և վարքագիծը՝ սկսած տեղավայրի ընտրությունից մինչև հավատալիքների համակարգ: Գյուղական միջավայրին բնորոշ մշակութային միասնության մեջ ուշադրություն են գրավում հատկապես խեցեգործական ավանդույթները՝ ձեռածեփ խեցեղենը, խեցեղենի ձևերի ոչ այնքան բազմազան կազմը, ներքին-արտաքին գունային հակադրությունը և ձևավորման բնութագրական տեխնիկան:

Կուր-արաքսյան մշակույթը հնագիտության աշխարհում, հատկապես՝ Մերձավոր Արևելքի հնագիտության ամենահայտնի և ամենաքննարկվող թեմաներից է: Իր ընդարձակ սահմաններով այս հարուստ մշակութային երևույթը նաև բազմաթիվ հիմնախնդիրների աղբյուր է: Այդ խնդիրները տարբեր են՝ սկսած մշակույթի տարաբնույթ անվանումներից մինչև ժամանակագրական խնդիրներ: Կախված տարածաշրջանի անվանումից՝ այս մշակույթը կոչվել է տարբեր անուններով: Դրանցից մեկը «Կարազի մշակույթ» անվանումն է, որով այն կոչվել է արևելյան Թուրքիայում իրականացված վաղ պեղումների ընթացքում, ինչն էլ և մեր հոդվածի նյութն է: Այս հոդվածում մենք նպատակ ունենք ներկայացնել «Կարազի մշակույթ»-ի անցած երկար ճանապարհի պատմությունը՝ կենտրոնանալով արևելյան Թուրքիայում՝ Էրզրումի շուրջն ընկած հնավայրերի պեղումների պատմության վրա:

ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՇԱՐԺԵՐԸ ՆՈՐ ՔԱՐԻ ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԱՂ ԲՐՈՆԶԻ ԴԱՐ

ԲԵՐԹԻԼ ԼՅՈՆԵ

Հիմնվելով հնագիտական տվյալների և գենետիկական ուսումնասիրությունների առաջին արդյունքների վրա՝ սույն հոդվածը նպատակ ունի ներկայացնելու Հյուսիսային և Հարավային Կովկասում, ինչպես նաև Եփրատի երկայնքով տեղի ունեցող հաջորդական մշակութային փոխակերպումները՝ սկսած նեոլիթից մինչև Ք.ա. 3-րդ հազարամյակի սկիզբ: Այս տեսանկյունից, մասնավորապես, ուշագրավ է նոր քարի դարից մինչ Ք.ա. 4-րդ հազարամյակի կեսերը Հյուսիսային Միջագետքի հետ մշակութային էական առնչությունների խնդիրը: Կարևոր է Ք.ա. 4-րդ հազարամյակի ընթացքում սև (և կարմիր) փայլեցված խեցեղենի ի հայտ գալու հանգամանքը, որը հանգեցնում է կուր-արաքսյան և նովոսվոբոդնայա մշակույթների ձևավորմանը: Այլ հարցերից է հարուստ քարարկղային թաղումների հայտնվելը նշված հազարամյակի վերջում հյուսիս-հարավ առանցքով՝ Եփրատի երկայնքով: Մի շարք փոփոխություններ և զարգացումներ կարելի է բացատրել ինչպես առևտրա-փոխանակային հարաբերություններով, այնպես էլ՝ մարդկանց փոքր խմբերի տեղաշարժով, այդ թվում՝ Կենտրոնական Եվրոպայից, Ք.ա. 4-րդ հազարամյակի երկրորդ կեսին:

ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ԳԱՂԹԻ ԽՆԴԻՐԸ. ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՖԱՆՏԱԶՄԻՑ ԴԵՊԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԵՐԵՎՈՒՅԹ

ՍԵՊԻԴԵ ՄԱՋԻԱՐ

Կուր-արաքսյան մշակութային ավանդույթն ուսումնասիրող մասնագետների հրապարակումների մեծ մասում այս ավանդույթի ընդլայնման գործընթացը մեկնաբանվում է որպես մարդկանց տեղաշարժ Ա կետից Բ կետ, կամ, լավագույն դեպքում՝ որպես այս կետերի միջև տեղի ունեցած շարժման ալիք: Մեկնություններից շատերում գաղթը համարվում է մարդկանց ուղղակի արձագանքը բնակչության աճին, արոտավայրերի բացակայությանը, բնական աղետներին, իսկ կուր-արաքսյան գաղթականները ներկայացվում են որպես բնական կամ կոնֆլիկտային սպառնալիքից փախչող փախստականներ: Վերջին տարիների հետազոտությունները վերջ են դնում այն պարզունակ դիտարկմանը, թե կուր-արաքսյան նյութական մշակույթի տարածումը զուտ միգրացիայի արդյունք է: Ներկա հոդվածում վերագնահատվում են երևույթի հետ կապված տարբեր սցենարներ: Առաջարկվում է կուր-արաքսյան մշակույթի երևույթը դիտարկել «կայունության տեսության» համատեքստում՝ կարևորելով սոցիալական կայունությունը և հասարակության ներքին փոփոխությունների հնարավորությունները:

ՀԻՆ ՍԱՄՇՎԻԼԴԵ ՔԱՂԱՔԻ ՎԱՂԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ

ՆԻՆՈ ՇԱՆՇԱՇՎԻԼԻ, ԳՈԴԵՐՁԻ ՆԱՐԻՄԱՆԻՇՎԻԼԻ

Սամշվիլդե քաղաքի տարածքում առկա է նաև կուր-արաքսյան մշակույթին պատկանող բնակավայր: Մասնավորապես՝ Սիոնի տաճարից 50-70 մ արևմուտք պեղվել են վաղ բրոնզի դարին պատկանող կացարաններ, որոնք վնասվել են միջնադարյան հորերի ու կառույցների հետևանքով: Կացարանների պատերն այնքան խախտված են, որ բնակարանաշինության հատակագիծը դժվար է պարզել: Պեղավայրի հյուսիսային հատվածում պահպանվել է միայն քարե պարսպի փոքր հատվածը և հարթակը, որոնք բազալտից են: Հարթակը ծածկված էր կավե լուծույթով, որի վրա դրված էին աղորիքներ, մանգաղի կայծքարե ներդիրներ, տարբեր չափերի խեցանոթներ: Հարթակի հիմքի մոտ դրված էր ուղղանկյուն սալաքար, որի մակերեսը պատված էր բարդ երկրաչափական զարդերով: Այստեղ կային նաև մեծ անոթների բեկորներ: Գրեթե ողջ խեցեղենը նախշազարդված է պարուրաձև և գծային զարդերով, ինչը բնորոշ է Քվեմո Քարթլիի, Հայաստանի և Իրանի կուր-արաքսյան մշակույթի հուշարձաններին: Համապատասխան խեցեղենը վերաբերում է կուր-արաքսյան մշակույթի ուշ փուլին և թվագրվում է Ք.ա. 28-27-րդ դարերով:

ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ. ՄԱԼԱԹԻԱՅԻ ԴԱՇՏԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ Ք.Ա. 4-ՐԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՎԵՐՋԵՐԻՆ

ՋՈՒԼԻՈ ՊԱԼՈՒՄԲԻ, ՄԱՐՉԵԼԱ ՖՐԱՆՋԻՊԱՆԵ

Վերին Եփրատյան և կուր-արաքսյան մշակութային ավանդույթների «հանդիպումը» տևական և բարդ գործընթաց էր, որը հնարավոր չէ բացատրել արևելյան Թուրքիայի կամ Հարավային Կովկասի համայնքների հյուսիսից հարավ հանկարծակի «ժամանումով»: Գործընթացի պատմական, քաղաքական և մշակութային «բարդությունները» լավագույնս դրսևորվում են Մալաթիայի հովտի Արսլանթեփե բնակավայրի VIB1 շերտի տվյալների օրինակով: Ուշ էնեոլիթյան Արսլանթեփե VIA-ն բնորոշվում է մոնումենտալ պալատական համալիրով և ուժեղ քաղաքական վերնախավով: VIA շերտն ավարտվում է պալատական համալիրի ավերմամբ, որին հաջորդած VIB1-ը բնորոշվում է արդեն կուր-արաքսյան մշակութային հատկանիշների ամենավաղ դրսևորումներով՝ մասնագիտացված անասնապահներով, որոնք էական առնչություններ են ցույց տալիս արևելյան Թուրքիայի և Հարավային Կովկասի շրջանների հետ: VIB1 շերտում ի հայտ եկած խեցեղենի նոր տվյալների վերլուծությունը պարզում է սերտ առնչությունների առկայություն արևելյան Թուրքիայի և Հարավային Կովկասի կուր-արաքսյան I փուլի համապատասխան նյութի հետ: Առկա տվյալները ցույց են տալիս մասնագիտացված անաասնապահների միջև առկա տևական շփումների ողջ դինամիկան:

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՆՑ. ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՌԱԴԻՈԱԾԽԱԾՆԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԻՑ

ԱՆՆԱՊԱՌԼԱ ՊԱՍԵՐԻՆԻ

Մինչ այժմ առաջ են քաշվել կուր-արաքսյան մշակույթին վերաբերող երկու ժամանակագրական համակարգեր:

Եռամաս համակարգը բացահայտում է այդ մշակույթի վաղ (I), զարգացած (II) և ուշ (III) փուլերը: Ելնելով կարմրասև փայլեցված խեցեղենով բնութագրվող համատեքստերի նոր 14C կալիբրացված թվագրության տվյալներից՝ այդ փուլերը համապատասխանաբար թվագրվում են Ք.ա. 3500-3300, 3300-2700, 2700/2600-2500 թթ. (Ջ. Պալումբի):

Երկմաս համակարգն առաջարկվել է Ռ. Բադալյանի կողմից՝ հիմնվելով Ծաղկահովտի դաշտի հուշարձանների (հատկապես՝ Գեղարոտի) շերտագրական տվյալների վրա. I փուլ կամ «միատարրության» շրջան, որը բնութագրվում է «էլառ-արագածյան» խեցեղեն խմբով (Ք.ա. 3500/3300-2900 թթ.) և II կամ «տարասեռության» փուլ, որը բնութագրվում է «կառնուտ-շենգավիթյան», «շրեշ-մոխրաբլուրյան» և «այրում-թեղուտյան» խեցեղենով (Ք.ա. 2900-2600/2500 թթ.):

Թեև երկու տարբերակներն էլ հիմնված են 14C տվյալների վրա՝ եռամաս համակարգը հիմք է ընդունում խեցեղենը, երկմասը՝ շերտագրությունը: Երկմաս համակարգը սահմանում է «ընդմիջման» պահը՝ Ք.ա. մոտ 2900 թ., ինչը համապատասխանում է 14C կալիբրացված ճշգրիտ սանդղակին, որը, ամենայն հավանականությամբ, կապված է արեգակնային ակտիվության փոփոխության հետ (հետևաբար՝ կլիմայական տատանումների, որոնք կարող են ազդեցություն ունենալ մշակութային փոփոխությունների վրա): Մեր աշխատանքը թույլ է տալիս եզրակացնել, որ երկմաս համակարգը խելամտորեն ընդգծում է ընդմիջումների և դադարների կարևորությունը ուսումնասիրվող մշակույթի զարգացումներում: Այն բացում է նոր հնարավորություններ Բայեսյան մոդելավորման համար՝ բացահայտելով զարգացման ավելի նուրբ օրինաչափություններ:

ՄԱՐՄԱՐԻԿԻ ԳԵՏԱՀՈՎՏԻ ՎԱՂ ԲՐՈՆԶԻ ԴԱՐԻ ՀՆԱՎԱՅՐԵՐԻ ՎԵՐՋԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ «ԿՈՏԱՅՔԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ» ՄԱՍ

ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՌՈԲԵՐՏՈ ԴԱՆ, ԲՈՐԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

2013 թ-ից ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Միջերկրածովյան և արևելյան երկրների ուսումնասիրության միջազգային ասոցիացիայի (Իտալիայի Հանրապետություն), Իտալիայի արտաքին գործերի նախարարության միջև համագործակցությամբ հայ–իտալական հնագիտական արշավախումբն աշխատանքներ է իրականացնում Կոտայքի մարզում: Արշավախմբի նպատակն է հետազոտել Հրազդան գետի վերին հոսանքը և Մարմարիկ գետի հովիտը, կազմել նշված տարածքի հնագիտական քարտեզը (պալեոլիթից միջնադար): Այս համատեքստում կարևոր նշանակություն ունի Մարմարիկի գետահովտի հնագիտական ուսումնասիրությունը, որը յուրահատուկ էկոխորշ է, թե՛ հնագիտական, թե՛ երկրաբանական առումով: Օգտակար հանածոներով հարուստ այս հովտում կատարվող աշխատանքները կարևոր նշանակություն ունեն Հայաստանի հնագիտության բազմաթիվ խնդիրներ լուծելու և շատ հարցերի պատասխանները ստանալու համար: Հոդվածում ներկայացված է արշավախմբի կողմից վերջին տարիներին Մարմարիկ գետի հովտում հայտնաբերված և ուսումնասիրված վաղբրոնզեդարյան հնավայրերի ուսումնասիրության արդյունքները:

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՍԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

ԿԱՐԵՆ ՌՈՒԲԻՆՍՈՆ

Այս աշխատանքը գրվել է ոգեշնչվելով «Արագած» ծրագրի կողմից պեղված Գեղարոտի 3-րդ դամբանաթմբի հրատարակությունից: Այստեղ ներկայացված են ուշ բրոնզի դարի Հարավային Կովկասի անվավոր փոխադրամիջոցների հետ առնչվող կենդանազարդ լծասարքերը, որոնց եզակի օրինակներից է Գեղարոտի վարազի պատկերով բրոնզե արձանիկը: Նման սարքերը զարդարող այլ պատկերների թվում են կառքերից որսված եղջերուների, առանձին թռչունների, եղջերուների և այլ կենդանիների պատկերները, ինչպես նաև մի քանի այլ պատմողական տեսարաններ: Առկա հարավկովկասյան բրոնզե արձանիկները զուգահեռներ են գտնում Միջագետքում և Փոքր Ասիայում՝ չնայած դրանց ժամանակային տարբերությանը:

Որսի տեսարանները մեծ հետաքրքրություն են ներկայացնում կառքերի պատկերագրության համատեքստում, թեև Հարավային Կովկասից համապատասխան կառքեր հայտնի չեն: Իհարկե, Լճաշենում պեղվել են բազմաթիվ անվավոր փոխադրամիջոցներ, բայց դրանք զանգվածեղ սռնանիվներով քառանիվ կամ երկանից կառքեր են և միայն երկուսն են, որոնք ունեցել են ճաղավոր անիվներ և հայտնաբերվել է ընդամենը մեկ ճաղավոր սայլանիվ: Լճաշենի ճաղավոր անիվներով կառքերը նման չեն դրանց բրոնզե օրինակներին: Հետազոտողների մեծ մասը ենթադրում է, որ պեղումներից ի հայտ եկած փայտե փոխադրամիջոցները ավելի շուտ վերնախավին են վերաբերում և չեն կիրառվել որսի ընթացքում:

Ի տարբերություն կառքերի՝ որսի տեսարաններ, մասնավորապես՝ եղջերուների առանձին պատկերներ և համապատասխան ոսկրաբանական տվյալներ կարելի է նկատել Հարավային Կովկասում նաև ավելի վաղ ժամանակաշրջանում: Խոսքը, հատկապես, միջին բրոնզի թռեղք-վանաձորյան մշակույթի վերնախավային թաղումներում հայտնաբերված նյութերի մասին է (Թռեղք, Քարաշամբ): Ըստ ամենայնի՝ եղջերուներն ունեցել են պաշտամունքային նշանակություն, որի արմատները հասել են կուր-արաքսյան մշակույթ:

ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎՄՏՅԱՆ ԻՐԱՆԻ ՅԱՆԸՔ ԹԵՓԵ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՎԱՂ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ IIA ԽԵՑԵՂԵՆԻ ՁԱՐԴԱՆԱԽՇԵՐԻ ՇՈՒՐՋ

ՋԵՖՐԻ Դ. ՍԱՄԵՐՍ

Ներկայացվող աշխատանքը քննարկում է հյուսիսարևմտյան Իրանի Յանըք Թեփե հուշարձանի (պեղվել է 1960-ական թթ-ին Չարլզ Բըրնիի կողմից) վաղ անդրկովկասյան սև փայլեցված խեցեղենի փորագրված, դրոշմված և սպիտակ

լիցքով զարդամոտիվները: Նախ՝ ներկայացվում է Յանըք Թեփեի խեցեղենի շերտագրական համատեքստը, ապա՝ նախշերի պատրաստման տեխնիկան: Մոտիվները բաժանվում են ընդհանուր կատեգորիաների՝ գծային, թռչնային և կենդանական, ապա՝ դրանք ներկայացվում են բարդ դեկորատիվ ձևավորումների համատեքստում: Համապատասխան նյութը քննարկվում է վաղ անդրկովկասյան մշակույթի ընդարձակ գոտու այլ հուշարձանների համապատասխան զարդանախշերի համեմատությամբ: Եզրակացություններում խոսվում է վաղ անդրկովկասյան մշակույթի ընդգրկուն սահմանների մասին՝ ընդգծելով, մի կողմից, այդ ավանդության ներփակ ու պահպանողական բնույթը, մյուս կողմից՝ առանձին տարածաշրջանային ոճերի առկայությունը:

ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊ ԿԱՎԵ ԱՐՁԱՆԻԿՆԵՐ ՀԱՌԻՃԻ ՎԱՂԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻՑ

ՄԱՐԻԱՄ ՍԱՐԻԲԵՐԿՅԱՆ

Հայաստանի վաղբրոնզեդարյան հնագիտական հուշարձանները հայտնի են կավե առարկաների պատրաստման շատ բարձր տեխնոլոգիաներով, և Հառիճի բնակատեղին նույնպես բացառություն չէ: Այստեղ կավանոթների, հենակների, իլիկի գլուխների և անիվների կողքին գտնվել են մեծ քանակությամբ կենդանակերպ և մարդակերպ արձանիկներ: Արձանիկների թիվը 335 է, որոնցից 17-ը մարդակերպ է, մնացածները՝ կենդանակերպ: Այս առարկաները հիմնականում խոշոր եղջերավոր կենդանիների մոդելներ են, հանդիպում են նաև շների, արջերի, թռչունների օրինակներ: Արձանիկները ձեռածեփ են, պատրաստված մանրահատիկ կավից, հիմնականում 2-7սմ երկարությամբ են և գտնվել են վաղբրոնզեդարյան բնակատեղիի հատվածից: Որոշ արձանիկների վրա պահպանվել են մատնահետքեր, գործիքների հետքեր, որոշների վրա շատ լավ արտահայտված են մարմնի և դեմքի մասերը (պոչ, բերան, կոտոշներ, ականջներ): Տարբեր ջերմաստիճաններում թրծումից հետո ստացել են շատ տարբեր գույներ, բայց հիմնականում՝ դարչնագույնի և շագանակագույնի տարբեր երանգներ են, երբեմն հանդիպում են նարնջագույն և բաց դեղին գույնի արձանիկներ: Կենդանակերպ արձանիկների նմանատիպ հսկայական քանակ չի հանդիպում տարածաշրջանի ոչ մի վաղբրոնզեդարյան բնակատեղիում:

ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ՇԵՆԳԱՎԻԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՊԱՐՍՊԱՊԱՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ՀԱԿՈԲ ՍԻՄՈՆՅԱՆ, ՄԻՏՉԵԼ Ս ՌՈԹՄԱՆ

Կուր-արաքսյան (շենգավթյան) սոցիալ-մշակութային ընդանրության կարևորագույն հուշարձաններից է Շենգավիթ քաղաքատեղին, որի կառուցողական հիմնական հորիզոններն՝ ըստ ռադիոածխածնային տարրալուծման արդյունքների, թվագրվում են Ք.ա. 2900-2500 թթ.: Այստեղ փաստվել է նաև վաղ բրոնզի դարից վաղ դամբանաբլուրների մշակույթի անցման փուլի ուշագրավ հավաքածու:

Ավելի քան 6 հա տարածք զբաղեցնող պարսպապատ քաղաքատեղին եղել է տարածքային ինքնատիպ կենտրոն՝ իր արբայնակ բնակատեղիներով, պաշտամունքային կառույցներով և պարսպապատ տարածքից դուրս ձևավորված դամբարանադաշտով: Ի տարբերություն ԿԱ 1-ի հնավայրի, ԿԱ 2-ի շերտերի կառույցները և գտածոները, ինչպես նաև վերնախավի դամբարանները վկայում են սոցիալական բարդ կառուցվածք ունեցող հասարակության մասին: Դրա հիմնական ցուցիչներից է չափազանց զարգացած պաշտպանական համակարգը՝ կազմված ուղղանկյուն որմնահեցերով հզորացված արտաքին քարաշեն պարսպապատից, որը ներքուստ հպված է կավածեփ հարթակին և ունեցել է դրանց վրա բարձրացող հում աղյուսից հոծ պատեր: Ըստ 1928 թ. Թադևոս Ավդալբեգյանի նկարագրության՝ պաշտպանական համակարգն ունեցել է ներքին՝ 4 մ լայնությամբ և արտաքին՝ 6 մ լայնությամբ քարաշար պարսպապատեր, իսկ առավել խոցելի արևելյան կողմում, որտեղ հրվանդանը նեղանալով միացել է հարթավայրին, կառուցված է եղել 10 մ լայնությամբ և 200 մ երկարության վիթխարի քարերից կառուցված պարսպապատ և խանդակ: Պաշտպանական համակարգի կարևորագույն բաղկացուցիչներից է եղել նաև դեպի Հրազդան գետն իջնող ստորգետնյա գաղտնուղին: 2021 թ. պեղումները բացահայտեցին, որ պարսպին կից՝ ներքուստ եղել են կլոր և ուղղանկյուն հատակագծով սենյակներ՝ թերևս կացարաններ պաշտպանների համար:

Նման մեծածավալ կառույցի իրականացման համար անհրաժեշտ էր զգալի քանակի աշխատուժի կենտրոնացում, այդ մարդկանց երկրագործական և արտադրական աշխատանքներից ազատ արձակելու հնարավորություն ու նրանց սննդով ապահովում: Այսպիսի աշխատանքներ կարելի էր իրականացնել միայն ղեկավար կենտրոնից հարկադրանքի պայմաններում: Շենգավթյան հասարակության շերտավորման մեկ այլ վկայություն են հացահատիկի պահպանման մեծածավալ հոր-շտեմարանները, որոնք կարող էին ամբարել զգալի քանակի բերք և որը շատ ավելի էր, քան բնակավայրում ապրողների պահանջմունքներն էին:

Հոդվածում քննարկվում են պաշտպանական համակարգի թվագրման հարցերը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ որոշ հնագետներ կասկածի տակ էին առնում վաղ բրոնզի դարում Շենգավթի պարսպի կառուցումը, 2021 թ. Հ. Սիմոնյանի ղեկավարած ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբը պեղումներ

իրականացրեց բնակավայրի հյուսիսային կողմում պահպանված պարսպապատի շրջակայքում:

Շենգավթի պաշտպանական համակարգի թվագրման համար կարևոր նշանակություն ունեն շերտագրական դիտարկումները և անխախտ շերտերում պեղված խեցեղենի տիպաբանական վերլուծությունը: Այս նպատակով առանձնացրել ենք սև փայլեցված և բաց-դեղնավուն քսուկով պատված կավանոթները, որոնք ունեն ուղիղ կամ փոքր-ինչ փքված պատերով պուլիկաձև (բանկայատիպ) իրաններ, բաց անկյան տակ անմիջապես պատերին միացող, գագաթային մասերում հարթ կտրած, լայնադիր շուրթեր, իսկ ստորին մասերում՝ երկու կողմերից ներճկված, փոքրադիր դեկորատիվ կանթեր: Շրեշբլուրի, Մոխրաբլուրի, Ագարակի, Սոթքի, Շահումյանի և այլ հնավայրերից հայտնաբերված նմանատիպ կավանոթները թվագրվում են Ք.ա. 2900-2600 թթ.: Հիմք ընդունելով տիպաբանական և շերտագրական դիտարկումները՝ կարող ենք եզրակացնել, որ Շենգավիթ քաղաքատեղիի պաշտպանական համակարգը կառուցվել և գործել է Ք.ա. 3-րդ հազարամյակի առաջին կեսին:

ՎԱՆԱԿԱՏԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՎԱՂ ԲՐՈՆԶԻ ԴԱՐՈՒՄ՝ ԸՍՏ «ԱՐԱԳԱԾ» ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ

ԱԴԱՄ Թ. ՍՄԻԹ

Որպես Հարավային Կովկասի հնագիտության մեջ Ռուբեն Բադալյանի ունեցած անհերքելի ներդրման վկայություն՝ այս աշխատանքը ներկայացնում է գրեթե քառորդ դար առաջ համատեղ նախաձեռնված «Արագած» ծրագրի պեղումներից ի հայտ եկած վաղ բրոնզի դարաշրջանի մեծաքանակ վանակատե առարկաների շարժական ռենտգեն ֆլուորեսցենտային (pXRF) ուսումնասիրության արդյունքները: Վիճակագրական վերլուծություններն արվել են Ծաղկահովիտի դաշտի հյուսիսարևելյան հատվածում գտնվող Գեղարոտ և Արագածի Բերդ հնավայրերի 467 միավոր նյութի հիման վրա: Արդյունքները նոր լույս են սփռում տարբեր ժամանակահատվածներում բնապաշարների շահագործման ռազմավարության առանձնահատկությունների վրա և վկայում են տեղական բնակչության փոխակերպումների մասին: Փոխանակման ցանցերի միջև առկա տարբերությունները Գեղարոտի տեղագրորեն սահմանված հատվածներում բացահայտում են առանձին տնային տնտեսությունների մասնակցությունը տարածաշրջանային փոխանակման ցանցերում: Այս ուսումնասիրութունը ցույց է տալիս, որ կուր-արաքսյան գյուղական համայնքների (մասնավորապես՝ Գեղարոտի) նյութական մշակույթում առկա միատարրությունը չպետք է ենթադրի առօրյա փորձառությունների, սոցիալական ցանցերի և փոխանակման հարաբերությունների բացակայություն:

ԼԵՌՆԱԿԵՐՏԻ ՎԱՂԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ, ՄԱՐԻԱՄ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ԴԱՎԹՅԱՆ, ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ, ՍՈՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Արագած լեռան հյուսիսարևմտյան լանջերը հարուստ են բրոնզ-երկաթեդարյան հնագիտական հուշարձաններով, որոնցից մեկը Լեռնակերտ գյուղի տարածքում գտնվող համալիրն է: Հնավայրը հարուստ է հնագիտական և պատմական հուշարձաններով, որոնք վերաբերում են Ք.ա. 3-րդ հազ-ից մինչև 19-րդ դարն ընկած ժամանակաշրջանին: Լեռնակերտի հնագիտական հուշարձանի կանոնավոր ուսումնասիրությունները սկսվել են 2019 թ-ից և շարունակվում են մինչ օրս:

Հնավայրում փաստագրվել է վաղբրոնզեդարյան բնակավայր, որն ընդգրկում է վաղերկաթեդարյան Վարի Բերդ ամրոցի տարածքը և շրջակայքը՝ հասնելով մինչև գյուղի հարավարևմտյան սահմանները: Հետախուզական երեք փոսորակներում բացվել են համասեռ և համաժամանակյա վաղ բրոնզի դարի ժամանակագրական երկրորդ փուլի՝ «կառնուտ-շենգավիթյան» խմբի խեցեղենի բեկորներ, որոնք հիմնականում կարասների, կճուճների, քրեղանների շուրթեր են, ինչպես նաև առկա են կափարիչներ, բռնակներ, հենակ-պատվանդաններ, մետաղից, օբսիդիանից և ոսկրից իրեր:

Այս առարկաները հիմնականում խոհանոցային, ամենօրյա օգտագործման են, սակայն, որոշների վրա հանդիպում են երկրաչափական նախշեր ու գծազարդումներ, թռչունների և կենդանիների պատկերներ: Հուշարձանի տարածքում գտնվել է նաև բրոնզից մանգաղաձև մի առարկա, որն այդ ժամանակաշրջանին բնորոշ, սակայն, քիչ հանդիպող օրինակներից է: Այս գտածոներն ապացույցն են, որ վաղբրոնզեդարյան ժամանակաշրջանում Վարի Բերդի շրջակայքում գոյություն է ունեցել զարգացած և տնտեսապես ակտիվ հասարակություն:

Հուշարձանից գտնված հարուստ, ինքնատիպ ու բազմազան խեցեղեն առարկաներից արտածվում է Լեռնակերտի հին բնակչության տնտեսությունը, կենցաղը, հավատալիքները: Ըստ այդմ՝ արժևորվում է Լեռնակերտի տեղը Շիրակի վաղբրոնզեդարյան հուշարձանների շարքում և առնչությունների բնույթը մոտակա բնակատեղիների հետ:

Լեռնակերտի համալիրի հետագա հետազոտությունները հնարավորություն են ընձեռում լույս սփռել Արագածի հյուսիսարևմտյան լանջերի հնագույն մշակույթների ուսումնասիրության խնդիրների վրա:

ԿՈՒՐ-ԱՐԱՔՍԻ ԾԱՎԱԼՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

Ք.ա. 4-րդ հազարամյակի վերջերին Կուր-Արաքսյան մշակույթի I փուլը հասնում է իր ավարտին, և որոշ ժամանակ անց նախկին հոմոգեն մշակույթը փոխարինվում է ոչ հոմոգեն Կուր-Արաքս II-ով: Այս երևույթի իրական պատճառներն առ այսօր քննարկման առարկա են հնագետների շրջանում: Իսկ արդեն Ք.ա. 2900 թ. սահմաններում կուր-արաքսյան մշակութային իրողությունները (խեցեղեն, կրակարաններ և այլն) հայտնվում են Փոքր Ասիայի արևելքում (Արսլանթեփե-Մալաթիա), Սիրիայում, Պաղեստինում և Ուրմիա լճի ավազանում:

Հոդվածում փորձ է արվում Կուր-Արաքս I-ի անկումը և դրա էքսպանսիան բացատրել շրջակա միջավայրի փոփոխություններով (այսպես կոչված 5.2 ka կլիմայական իրադարձություն): Առաջավոր Ասիայում և Եգիպտոսում տիրող համաժամանակյա արմատական քաղաքական իրադարձությունների համատեքստը թույլ է տալիս ենթադրելու, որ միայն միջավայրի կլիմայական պայմանների ազդեցությունը կարող էր պատճառ դառնալ գոյություն ունեցող կացութաձևի հիմնավոր փոփոխությունների համար: Առաջավոր Ասիայի հետագա պատմության ընթացքում հասարակությունների կենսագործունեության վրա միջավայրի վճռորոշ ազդեցության օրինակների լույսի ներքո կարելի է հանգել այն եզրակացության, որ 5.2 ka կլիմայական իրադարձությունը պետք է ստիպեր կուր-արաքսյան մշակույթի կրողների զգալի հատվածին տեղաշարժվել բնակության համար ավելի հարմար տարածաշրջաններ: